

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՄԼԵՏԻ» ՀԱՅԵՐԵՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Մարո Ղուկասյան**

Հիմնաբառեր՝ գեղարվեստական թարգմանություն, թարգմանիչ, թարգմանության լեզու, տեսություն, գրախոսություն, գրականություն, քննադատ, բնագիր, դիտողություն, հրատարակություն:

Գեղարվեստական թարգմանության հարցերը եղել են Թումանյանի ուշադրության կենտրոնում, դարձել նրա քննարկման հիմնական խնդիրներից մեկը հատկապես այն բանից հետո, երբ ինքն է սկսում կատարել թարգմանություններ: Բանաստեղծը մեծ կարևորություն է տվել թարգմանական գործին, որի շնորհիվ փոքր ժողովուրդները, կատարելով թարգմանություններ ավելի հարուստ գրականություն ունեցող ժողովուրդներից, կարող են մշակութային առումով բարձրանալ:

Տարբեր առիթներով Թումանյանն անդրադարձել է թարգմանական արվեստի խնդիրներին, բարձրաձայնել այս կամ այն թարգմանության հրատապ հարցերը: Այս առումով դիտարկելի են առավելապես նրա քննադատական հայացքները Շեքսպիրի «Համլետի» հայերեն թարգմանությունների վերաբերյալ:

Թումանյանի համար չափանիշ էր Շեքսպիրի երկերի թարգմանությամբ տվյալ թարգմանական գրականության զարգացման մակարդակը որոշելը. «Շեքսպիրը դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանն որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տհաս է. եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է»<sup>1</sup>: Այսինքն՝ Թումանյանի կարծիքով Շեքսպիրի երկերի թարգմանությամբ կարելի էր որոշել տվյալ լեզվի գեղարվեստական ուժը:

1896 թվականին Թումանյանը գրում է Հովհ. Խան-Մասեհյանի թարգմանությանը նվիրված մի ուսումնասիրություն, իսկ 1900 թվականին՝ անդրադառնում Գ.Բաբազյանի կատարած թարգմանությանը: Այլ բան է Շեքսպիր ընթերցելը, և միանգամայն այլ՝ այն թարգմանելը: Հարցի լրջության վրա ուշադրություն է հրավիրում Թումանյանը: Թարգմանվում էր մի գործ, «որի ամեն մի խոսքն ու նախադասությունը, չափած ու կշռած, ունեն իրանց խոր նշանակությունն ու հաստատ տեղը» (VI, 124): Թե՛ Հովհաննես Խան-Մասեհյանի, թե՛ Բաբազյանի թարգմանություններին նրա անդրադարձը լուրջ, խորը ուսումնասիրության արդյունք է: Դերենիկ Դեմիրճյանը պատմում է, որ Թումանյանը համեմատում էր «Համլետի» ռուսերեն և հայերեն թարգմանությունները, նայում անգլերեն-ռուսերեն բառարանները, դրանց միջոցով ճշտում զանազան ֆրազներ<sup>2</sup>: Այս մասին Թումանյանը «Թարգմանությունները և

<sup>1</sup> Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. VI, Ե., 1994, էջ 53-54: Հետագայում բոլոր մեջբերումները Թումանյանի երկերից կկատարենք սույն հրատարակությունից՝ փակագծերում նշելով հատորը և էջը:

<sup>2</sup> Լ. Հախվերդյան, Մեծերը ամենամեծի մասին, Ե., 1999, էջ 117:

հրատարակությունները մեզանում» հոդվածում գրում է. «Ձեռքիս ունեցել եմ Robert Loglis-ի՝ Լոնդոնում արած անգլերեն բնագիրը, իսկ խոսքերը ստուգել եմ Александров-ի անգլերենից ռուսերեն հայտնի բառարանով» (VI, 465):

Շեքսպիրի «Համլետը» հայերեն թարգմանությամբ առաջին անգամ լույս է տեսել Թիֆլիսում 1889 թվականին՝ հայտնի հասարակական-գրական գործիչ Սենեքերիմ Արծրունու թարգմանությամբ: Հինգ տարի անց՝ 1894-ին, դարձյալ Թիֆլիսում հրատարակվում է Հովհաննես Խան-Մասեհյանի թարգմանությունը, իսկ 1899-ին Վիեննայում երևան է գալիս մի նոր թարգմանություն, որն իրագործել էր Գարեգին Բաբազյանը: Մասեհյանի թարգմանությունը զգալիորեն տարբերվել է նախորդ երկուսից և ջերմ ընդունելություն գտել: Գրքի հրատարակությունից երկու տարի անց «Տարագի» 1896 թ. 40-45-րդ համարներում գրախոսությամբ հանդես է գալիս Հովհաննես Թումանյանը: Նա մանրամասնորեն անդրադառնում է հատկապես բոլոր այն թերություններին ու բացթողումներին, որ առկա էին կատարված աշխատանքում:

Թումանյանը, իհարկե, կարևորում է այն հանգամանքը, որ թարգմանությունն արված է հենց անգլերենից, այլ ոչ թե միջնորդ լեզվից, բայց և նկատում է, որ հրատարակված գիրքն ունի երկու կարևոր բացթողում. այն չունի առաջաբան, որտեղ համառոտ կերպով կներկայացվեր բովանդակությունը, որոշ հայտնի քննադատների կարծիքները, ինչպես վարվում են ռուս թարգմանիչները, չունի նաև այնպիսի մաս, որտեղ թարգմանիչը բացատրում է դժվարըմբռնելի հատվածները, արտահայտությունները, բառերը, նշում, թե ինչու է այս կամ այն բառը, կապակցությունը այդպես թարգմանել: Մասեհյանի գրքում կան ծանոթագրություններ, բայց դրանք Թումանյանի կարծիքով բավարար չեն: Գրքի առաջաբանում Մասեհյանը ուշադրություն է հրավիրում մի կարևոր հանգամանքի վրա. «Արդ, ի՞նչ չափով թարգմանել հայերեն, որ ոճի նոյն ոյժը, նոյն ձայնի ելելէջը եւ ընդհանրապէս նոյն ոգին արտադրուէին: Այս խնդիրը մեզ շատ ասելի զբաղեցրել է, քան նոյն իսկ թարգմանութիւնը»<sup>3</sup>: Թերևս այդ է պատճառը, որ, ինչպես նկատում է Թումանյանը, բավականին շատ են թերությունները. լավագույն թարգմանության դեպքում չափը, ռիթմը պետք է ներդաշնակվեն ասելիքին, բովանդակությանը:

Հետևենք Թումանյանի մի քանի դիտողություններին. «Օրինակ. համեմատելով իր մեռած հորը իր հորեղբոր հետ՝ Համլետն ասում է.

«Նա սրա մոտ այն է,

Ինչ որ Հիպերիոնը մի Սատիրի մոտ»:

Սատիր և Հիպերիոն անունները պ. Մասեհյանը բացատրել է այսպես.

«Սատիր ասելով ուզում է ակնարկել Պան աստծուն, և Հիպերիոն միևնույնն է, ինչ որ Ապոլլոն: Պան և Ապոլլոն եղբայր էին» (VI, 56): Այս ծանոթագրությունը ոչինչ չի ասում ընթերցողին և, ի վերջո, անհասկանալի է մնում, թե ովքեր էին Սատիրը, Հիպերիոնը, Պանը և

---

<sup>3</sup> Շեքսպիր, Համլետ Դանեմարքի իշխան, Անգլիերենից թարգմանեց Յովհաննես Խան Մասեհեան, Թիֆլիս, 1894, էջ 4:

Ապոլլոնը: Հենց այս «մութ» և ոչ լիարժեք բացատրություններն է հողվածի հեղինակը թերություն համարում:

Ապա Թումանյանն անդրադառնում է հենց բուն թարգմանությանը՝ նշելով, որ ինքը միտք չունի քննադատելու, հատկապես որ դրա համար անհրաժեշտ է անգլերեն իմանալ: Այդուհանդերձ նա համեմատում է Մասեիյանի թարգմանությունը զանազան աղբյուրների հետ և նկատում որոշ կասկածելի հատվածներ: Ահա դրանցից մեկը.

«Բայց, դատողությունը այնպես բնության դեմ  
Պայքարած է, որ այդ՝ *չափավոր վշտով*  
Մտածում ենք մեր եղբոր մասին,  
Բայց և առանց մենք մեզ մտքից հանելու:

Թումանյանը *չափավոր վշտի* տեղ թարգմանել են.

Кетч. Борьба рассудка с природой правила нас, однако ж, к благоразумно грустному воспоминанию о нем, памятью и о себе.

Крон. ... Вспоминая

Кончину брата с мудрою тоской.

Мы вместе с тем себя не забываем.

Гнед. ... Грусть

Разумней стала: думая о брате,

Мы в то же время мыслим о себе.

Кан. Рассудок.... заставляет нас благоразумно скорбеть об умершем... (VI, 60-61):

Հաջորդում է սրառես քննադատ Թումանյանի պարզաբանումը. «Իսկ այդ *չափավոր վիշտը* անվայել խոսք է, վիրավորանք է թագավորի մահվան հիշատակին, որ տակավին թարմ է, և վերջապես, անբնական է մի մարդու բերանում, որ խոսում է իր *սիրելի եղբոր* մահվան մասին» (VI, 61): Այսինքն՝ Թումանյանի համար կարևոր էր թարգմանված ամեն մի բառի տեղին, բնական, հոգեբանորեն արդարացված լինելը:

Թումանյանն անդրադառնում է նաև ձայնարկությունների թարգմանության, ավելի ճիշտ կլինի ասել, վերստեղծման հարցին: Եթե բառախաղերը Մասեիյանը կարողացել է համարժեքով փոխարինել, ապա ձայնարկությունները թողել է անփոփոխ, որը Թումանյանի կարծիքով թերություն է. հայ ընթերցողի համար ծիծաղելի են «հիլո», «հո» և նմանատիպ այլ օտարահունչ ձայնարկություններ: Թարգմանության տեսաբանները գրեթե միակարծիք են ձայնարկությունների թարգմանության հարցում. թարգմանության տեսաբաններ Ս.Վլախովը և Ս.Ֆլորինը այս առումով ընդգծում են, որ նախընտրելի է նման պարագայում, անտեսելով ազգային կոլորիտը, փոխարինել ձայնարկությունները թարգմանող լեզվի համարժեքներով, որոնք կարող են իրենց հնչողությամբ զգալիորեն տարբեր լինել բնագրի լեզվի ձայնարկություններից<sup>4</sup>: Այս հարցում նշված տեսաբանների և Թումանյանի կարծիքները համընկնում են:

<sup>4</sup> С. Влахов, С. Флорин, Непереводимое в переводе, М., 1986, стр. 314-320.

Թումանյան-քննադատը չի շրջանցում նաև Մասեհյանի կատարած թարգմանության լեզվի խնդիրը՝ նշելով, որ լեզուն վատ է, և ո՛չ թարգմանիչը, ո՛չ էլ հրատարակիչները հարկ եղած ուշադրությունը չեն դարձրել լեզվի վրա: Նա միանգամայն իրավացի կերպով նշում է, որ վատ լեզվով կատարված թարգմանությունները և առհասարակ վատ գրված գործերը չպետք է հրատարակել: Դառնալով հրատարակիչներին՝ նա ասել է. «Վաղուց պետք է Հրատարակչական ընկերությունը համոզված լիներ, որ վատ լեզուն կփչացնի ամեն մի գեղեցիկ միտք, թեկուզ Շեքսպիրինը լինի այն» (VI, 80): Զարմանալին այն է, որ Հովհաննես Հովհաննիսյանը Մասեհյանի՝ «Համլետի» թարգմանությանը նվիրված գրախոսականում բավականին դրական է արտահայտվում հենց թարգմանության լեզվի մասին՝ նշելով, որ թարգմանիչը հրաշալի տիրապետում է իր մայրենի լեզվին, նրա լեզուն ճոխ է ու բանաստեղծական<sup>5</sup>:

Կարելի է մանրամասն անդրադառնալ օրինակներով հիմնավորված այն բոլոր դիտողություններին, որոնց մասին գրում է Թումանյանը: Բայց իհարկե որոշակի վերապահությամբ պետք է ընդունել դրանք, քանի որ Թումանյանը եզրակացություններ է անում՝ ելնելով ոչ թե բնագրից, այլ ռուսերեն թարգմանություններից, թեև կարողանում է հմտորեն վերլուծել ու պարզաբանել դրանք: Բացի այդ, հայտնի է, որ նա այդ ընթացքում դիմել է Մ.Տեր-Անդրեասյանի օգնությանը՝ բնագրային ճշտումներ կատարելու նպատակով:

1921 թվականին Վիեննայում վերահրատարակվում է «Համլետը»՝ Մասեհյանի թարգմանությամբ: Զգալի տարբերություն կա 1894 և 1921 թվականների հրատարակությունների միջև: Նոր հրատարակության մեջ հաշվի են առնված Թումանյանի բոլոր դիտողությունները, այդ թվում՝ թարգմանությանը ընդարձակ ծանոթագրություններ և առաջաբան կցելու պահանջը: Երկրորդ հրատարակությունն ունի արդեն կարճ նախաբան և «Համլետի աղբյուրները» վերնագրով ներածական հոդված, իսկ գրքի վերջում տեղ են գտել ընդարձակ ծանոթագրություններ:

Հետաքրքրական է «Համլետի» այս երկրորդ հրատարակության վերաբերյալ Խաժակ Գյուլնազարյանի դիտարկումը. «Բայց մեզ համար այս դեպքում առավել հետաքրքիրն այն է, որ կարծես հաշվի առնված լինեն նաև գրքի՝ բանաստեղծի սեփական օրինակի անհամար նշումները, որոնց, իհարկե ծանոթ չի եղել թարգմանիչը: Այսինքն, կրկին անդրադառնալով «Համլետի» թարգմանությանը, Հովհաննես Մասեհյանը գործը տարել է ճիշտ այն ուղղությամբ, ինչ առաջարկում էր Թումանյանը»<sup>6</sup>:

Հետագայում արդեն, համեմատելով Մասեհյանի և Բաբազյանի թարգմանությունները, Թումանյանը գովեստի խոսքեր է ասում առաջինի կատարած աշխատանքի մասին. «Իմ լիասիրտ հարգանքը պ. Հովհ. Խան-Մասեհյանին, որ անգլերենից հայերենի է վերածում Շեքսպիրը, որ հայկական աղքատ հողում պատվաստում է, Գյոթեի խոսքերով ասենք, էն

<sup>5</sup> Հովհաննիսյան Հ., Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1965, էջ 211:

<sup>6</sup> Թումանյան Հ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 4, Ե., 1985, էջ 168-169:

հսկայական կաղնին, որի մոտ միանում ու որից բաժանվում են գրականության բոլոր ճյուղերը» (VI, 461):

Ջալալ Տեր-Գրիգորյանը 1897 թվականի մայիսի 30-ին Թումանյանին ուղղված նամակում գրում է. «Մեծ հետաքրքրությամբ «Տարագում» կարդում էի «Համլետի» թարգմանության քննադատությունը և ամեն մի դիտողություն գտնում էի շատ խելացի: Ամեն մի համարը ստանալիս հետաքրքրվում էի, թե ով պիտի լինի այս պարոնը (քննադատը): Ճշմարիտն ասած, երբեք չէի մտածում, թե կարող է քոնը լինել: Որքան ուրախացա, երբ վերջը ստորագրությունդ կարդացի: Ինչպես երևում է, այժմ լուրջ ես աշխատում գրական զարգացում ձեռք բերել»<sup>7</sup>: Այսպիսով, Մասեհյանի թարգմանության վերաբերյալ Թումանյանի արտահայտած մտքերն ու դիտողությունները վկայում են Թումանյան-քննադատի հասունության նոր փուլի մասին:

Իսկ ինչպիսի՞ թերություններ է նկատում Թումանյանը Գարեգին Բաբազյանի թարգմանության մեջ: Ընդգծելով գործի լրջությունը՝ նա միանգամից անցնում է սխալների բացահայտմանը: Թումանյանը քերականորեն սխալ ձևակերպված նախադասություններ է առանձնացնում, ինչպես օրինակ.

«Համլետ Պոլոնիոսին ասում է.

– Այո, պարոն, պարկեշտ լինել ինչպես աշխարհքս կքալե, կնշանակե տասն հազարեն մին ընտրել:

Քերականորեն սխալ այս նախադասության միտքը միանգամայն հակասում է Համլետի հայացքներին և իսկույն մատնում է իրան:

Պ.Մասեհյան այսպես է թարգմանել.

– Այ, լինել ազնիվ այսպիսի աշխարհում, այդ է՝ լինել ընտրյալ տասն հազար մարդից» (VI, 125): Հասկանալի է, որ Թումանյանը նախընտրում է Մասեհյանի թարգմանությունը:

Թումանյանն անդրադառնում է նաև թարգմանության մեջ բաց թողնված հատվածներին, բացահայտում զանազան սխալներ: Ինչպես Մասեհյանի թարգմանության առթիվ գրված գրախոսության մեջ, այստեղ էլ նա հարկ է համարում կրկին բացատրել «xop» բառի իմաստը, որը երկու թարգմանիչներն էլ ընկալում են իբրև խմբերգ, այնինչ «xop – Շեքսպիրի ժամանակները կոչվում էր այն մարդը, այն դերասանը, որ խաղամիջոցներին դուրս էր գալիս պիեսի մութ տեղերը բացատրում, մեկնում և զբաղեցնում հասարակությանը» (VI, 127):

Այսպիսով, Թումանյանի այս գրախոսությունները՝ նվիրված Շեքսպիրի «Համլետի» հայերեն թարգմանություններին, վկայում են Թումանյան-քննադատի խորաթափանցության, ջանասեր աշխատանքի, գրական նուրբ ընկալումների մասին: Վերլուծելով ու մեկնաբանելով այդ գործերը՝ նա առավելապես ուշադրություն է դարձնում բառային վրիպումներին: Եվ դա բնավ պատահական չէ. Թումանյանի համար ամեն մի բառը մի աշխարհ է, խախտվում են աշխարհների տեղերը, խախտվում է և տիեզերական ներդաշնակությունը: Իսկ գրողի ձգտումը գրականության մեջ ներդաշնակության հասնելն էր:

<sup>7</sup> Թումանյան Հ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 4, Ե., 1985, էջ 325, 326:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թումանյան Հովհ., Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 4, Ե., 1985:
2. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. VI, Ե., 1994:
3. Հախվերդյան Լ., Մեծերը ամենամեծի մասին, Ե., 1999:
4. Հովհաննիսյան Հ., Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1965:
5. Շեքսպիր, Համլետ Դանեմարքի իշխան, Անգլիերենից թարգմանեց Յովհաննէս Խան Մասէիեան, Թիֆլիս, 1894:
6. Влахов С., Флорин С., Непереводимое в переводе, М., 1986.

## **MARO GHUKASYAN – HOVHANNES TUMANYAN ABOUT ARMENIAN TRANSLATIONS OF SHAKESPEARE’S “HAMLET”**

Reviews of Tumanyan on Armenian translations of Shakespeare’s “Hamlet” tell us about the depth of hard work and the fine literary perception of Tumanyan-critic. Analysing these translations, he mostly drew attention to lexical mistakes. And there is no coincidence at all: for Tumanyan each word is the world, changing the location of the worlds you change the harmony of the space. After all, the writer’s desire is to attain harmony in the literature.

## **МАРО ГУКАСЯН – ОВАНЕС ТУМАНЯН ОБ АРМЯНСКИХ ПЕРЕВОДАХ “ГАМЛЕТА” ШЕКСПИРА**

Рецензии Туманяна, посвященные армянским переводам “Гамлета” Шекспира, говорят о глубине, об усердной работе и тонком литературном восприятии Туманяна-критика. Анализируя эти переводы, он в основном обращает внимание на словарные ошибки. И это отнюдь не случайно: для Туманяна каждое слово – это мир, меняется расположение миров, меняется и гармония во вселенной. А ведь стремление писателя – достигнуть гармонии в литературе.